Մշակութային օրենսդրության հիմունքների մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 20-ին ՀՕ-465-Ն օրենքի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 2. Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը

Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքակա-նությունը կազմակերպվում և իրականացվում է «Մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման ռազմավարության» հիման վրա, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը։»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ստեղծումը» բառից հետո լրացնել «, ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների գործունեության խթանումը, բարենպաստ միջավայրի ձևավորումը» բառերով։»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «ստեղծագործական աշխատող» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«**ինքնազբաղ/անկախ ստեղծագործող՝** որևէ ստեղծագործական միության չանդամակցող և որևէ կազմակերպությունում մշտական գործունեություն չծավալող, անկախ արվեստագետ, անհատ ստեղծագործական աշխատող,

մշակութային գործունեությամբ զբաղվող անձ՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի

գործողության ոլորտներում գործունեություն իրականացնող, կամ մշակութային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ներառված ֆիզիկական անձ։»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) մշակույթի պահպանման, հանրահռչակման և զարգացման նպատակով ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ և հաստատում դրա կանոնադրությունը։»,

2. 1-ին մասը լրացնել նոր 6-րդ, 7-րդ, 8-րդ կետերով.

«6) սահմանում է պետական ոչ առևտրային կազմակերպություններ հանդիսացող մշակութային հաստատությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները.

7) հաստատում է պետական ոչ առևտրային կազմակերպություններ հանդի-սացող մշակութային հաստատությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման կարգերը.

8) հաստատում է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներում և մրցանակաբաշխություններում մրցանակի արժանացած մշակույթի գործիչների անվանական թոշակի վճարման կարգը և չափերը։»:»

Հոդված 5. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ միջնորդություններ.».

2. 2-րդ մասի 11-րդ կետի «Ազգային» բառը փոխարինել «Պետական» բառով.

3. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12-րդ և 13-րդ կետերով.

«12) հաստատում է մշակութային կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստման, ստեղծագործական կազմի ատեստավորման և ելույթավճարների տրամադրման սկզբունքների ձևավորման կարգերը.

13) սահմանում է պետական ոչ առևտրային կազմակերպություններ հանդիսացող մշակութային հաստատությունների սակագնային ընդհանուր քաղաքականությունը։»:

Հոդված 6. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իրա-կանացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ չարգելված, իր ստեղծման կանոնադրական նպատակին համապատասխանող մշակութային և ձեռնարկատիրական գործունեություն:».

2. 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ մասով.

«Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունը հաստատում է իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և լիազոր մարմնի կողմից սահմանված սակագնային քաղաքականությանը համապատասխան, ինչպես նաև իրականացնում է աշխատակիցների պարբերական ատեստավորման գործընթացը:»:

Հոդված 8. Օրենքի 26.1-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «ֆիլմարվեստի» բառը փոխարինել «կինոարվեստի», իսկ «Ազգային» բառը «Պետական» բառով:
2. 2-րդ մասի «Ազգային» բառերը փոխարինել «Պետական» բառով:
3. 2-րդ մասի 1-ին կետում «տարածմանը» բառը փոխարինել «տարածումը» բառով:
4. 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքը լրացնել 26.2-րդ հոդվածով.

«Հոդված 26.2. Մշակույթի զարգացման հիմնադրամի գործառույթները

«1. Մշակույթի զարգացման հիմնադրամն իրականացնում և գործարկում է թանգարանների արդյունավետ կառավարման մեխանիզմներ, թատերահամերգային կազմակերպությունների առաջխաղացման, լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման և Հայաստանի Հանրապետությունում ու միջազգային հարթակներում հայ մշակույթի հանրահռչակմանն ուղղված գործառույթներ:»:

Հոդված 10. Ուժի կորցրած ճանաչել օրենքի 31-րդ հոդվածը։

Հոդված 11. Օրենքի 32-րդ հորդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 32. Անցումային և եզրափակիչ դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը։
2. Օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերն ու կանոնակարգերը ընդունվում են օրենքի ուժի մեջ մտնելուց՝ 9 ամիս հետո։

3. Մշակութային հաստատությունների անվանումների համապատասխանեցումները ավարտվում են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը»։»